# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էդմոնդ Հովհաննիսյան Վաhեի Ա/Ձ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/99 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | Boob Manufactures | Համազգեստը բաղկացած է բաճկոնից, տաբատից, կեպիից, ներքնաշապիկից, սվիտերից: Կտորի բաղադրությունը 35±2% բամբակ, 65±2% պոլիէսթեր (կտորի խտությունը՝ 220±10գր/մ2): Բաճկոնի առաջամասերը և կոկետկան մշակվում են 100% բամբակ բաղադրությամբ, 130±10% գ/մ2 մակերեսային խտությամբ բամբակյա աստառով: Ներսում տեղադրված է ծոցագրպան, որի մուտքը մշակվում է հիմնական կտորից եզրաքուլով: Բաճկոնի կոճկումն իրականացվում է պաշտպանիչ կափույրի տակ թաքնված նեյլոնե շղայով: Կափույրը ամրանում է առաջամասին 3 հատ մետաղական կոճգամներով կամ 7 սմ երկարությամբ երեք հատ կպչուն այինժապավեններով: Գոտին մեկ առանձին կտորից գոտեմասով: Թևքերի թեզանիքը կոճկվում է 2 օղակ/կոճակով: Բաճկոնի առաջամասերի ներքևում մշակվում է թեքներկարված գրպաններ՝ մշակված 100% բամբակ բաղադրությամբ, 130±10% գ/մ2 մակերեսային խտությամբ բամբակյա աստառով: Կրծքամասում արտաքին ձևավոր կափույրով, կոճակով կոճկվող գրպաններով: Բաճկոնի օձիքը հետծալված: Բաճկոնի կողային մասերը ունի |

12 – 18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Բաճկոնի հետևամասը բաղկացած է 2 կտորից: Առջևի աջ գրպանի վերևի մասում ամրացվում է «ՈՒԱԿ»-ի տարբերանշանի ասեղնագործությամբ արհեստական թավշյա /искусственная замша/ կտոր, թիկունքին «ՈՒԱԿ»-ի տարբերանշանի ասեղնագործությամբ արհեստական թավշյա /искусственная замша/ կտոր: Ձախ թևքին ուսամասից 60 մմ ներքև կարվում է «ՈՒԱԿ»-ի տարբերանշանի թևքանշանը ասեղնագործված արհեստական թավշյա /искусственная замша/ կտորի վրա՝ բաղկացած է 2 մասից, կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փականեզրակարով: Ուսադիրները գունաքողարկվող կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ՝ վրադիրներով: Ձախ գրպանի վերևի մասում 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Տաբատը՝ ուղիղ ուրվագծով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է կոճակով և շղթայով: Կողային հատվածներում մշակվում են թեքներկարված գրպաններ՝ մշակված 100% բամբակ բաղադրությամբ, 130±10% գ/մ2 մակերեսային խտությամբ բամբակյա աստառով: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Կեպին – բաղկացած է կոշտ հովհարից, կողամասերից և հատակից, 7 սմ բարձրությամբ: Հետևամասում առաձգական ժապավեն: Աստառը՝ բամբակյա կտորից: Չափսերը՝ հասակային, սանդղակը՝ 48-66, քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի: Ներքնաշապիկ՝ (մայկա սև) ուղիղ ձևվածքով է, սև գույնի 100% բամբակյա գործվածքից 140-150 գ/մ2 խտությամբ, կարճաթև, կլորօձիքով: Չափսերը՝ հասակային, սանդղակը՝ 48-64, քանակներն՝ըստ պատվիրատուի պահանջի: Սվիտեր՝ սև 50% բուրդ, 50% ակրիլ գործվածքից, օձիքը՝ շրջանաձև բացվածքով, հավաքովի գործվածքով: Ձախ կրծքավանդակին առկա է շերտակարով, վրադիր կափույրով, կոճկվող գրպան: Մեջքի հատվածում ասեղնագործած «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» տարբերանշանը Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկ

| | | |
|---|---|---|
| | | այացնի նմուշ` արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Эдмонд Оганесян Вагеевич И/П в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/99 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 3 | | |